

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՈՂ Ե, ՈՐԸ ԶՈՐ ՊԵՏՔ Ե ՊԱՐԵԼ

### ՉՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Յրապարակելով մեր մշտական հեղինակներից Չորի Բալայանի հոդվածը, կուգենայինք նախապես արտահայտել որոշ մտքեր: «Ազգը» քանից անդրադարձել է պատմաբան Արմեն Այվազյանի դոկտորական թեզի պաշտպանության ճախողման թեմային՝ ընթերցողներին ներկայացնելով տարբեր տեսակենսներ: Խմբագրության ստացած բազմաթիվ արձագանքների մեջ էր նաև հայ մտավորականության հայտնի ներկայացուցիչներ Սու Սարգսյանի, Չորի Բալայանի, Պերճ Զեյթունցյանի եւ Լեւոն Անանյանի նամակը: Ծուտով բաց նամակի ժանրով պատասխան ստացվեց ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնի դոցենտ Պետրոս Յովհաննիսյանից: Այն ուղղված էր 4 հեղինակներից միայն մեկին՝ Չորի Բալայանին: Ուղերձն ավարտվում է մաղթանքով. «Ճիշտ չէ՞ր լինի արդյոք շարունակեիք զբաղվել հրապարակախոսությամբ, որտեղ դուք ասելիք եւ այն էլ շատ ասելիք ունեք»:

Չընդունելով նման մտահանգումը, մենք այնուամենայնիվ հարկ համարեցինք տպագրել հիշյալ նամակը: Պետք է խոստովանել, որ այսօր ընթերցողի ուշադրությանը ներկայացվող գրող Չորի Բալայանի նոթերը ոչ այնքան բաց նամակի պատասխանն են, որքան բուռն կերպով ծավալված քննարկումը Այվազյանի թեզի պաշտպանության շրջանակներից դուրս բերելու փորձ: Յիմնավոր է հեղինակի տագնապը հայրենական պատմագրության ճակատագրի առնչությամբ, մանավանդ եթե նկատի ունենաք, որ Արեւմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի հայագիտությունը վերջին տարիներին փորձում է խեղաթյուրել ոչ միայն Յայաստանի պատմությունը, այլեւ մեր բազմաթիվ ազգային արժեքներ:

Չնայած տեղի ունեցած բոլոր աղետներին, պատմությունը հնարավոր չէ վերափոխել, եւ մեզ մնում է միայն արիաբար նայել նրա աչքերին, որպեսզի այդ աղետներն այլեւս չկրկնվեն:

### Մայա Անգելու

2003 թ. դեկտեմբերի 9-ին Յայաստանի ակադեմիայի պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում կայացավ երեսունիննամյա Արմեն Այվազյանի ատենախոսության պաշտպանությունը: Դոկտորական

ատենախոսության թեման լավ հայտնի էր մասնագետ-պատմաբաններին, քանի որ դրանից տակավին ինն ամիս առաջ ատենախոսը հրատարակել էր «Հայոց Եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» մենագրությունը: Այդ ընթացքում գեթ մեկ բացասական գրախոսություն չի եղել (կար դրական մի արձագանք «Գրական թերթում»): Ճիշտ է, գրքի հեղինակի նկատմամբ վերաբերմունքն արտահայտվեց, ես կասեի, այլ կերպ: Առաջին համաշխարհային հայագիտական համաժողովին, որի աշխատանքներին մասնակցեցին տասնյակ երկրներից ժամանած հայագետներ, չիրավիրվեց Արմեն Այվազյանը, որ հեղինակ է այնպիսի մենագրությունների, ինչպիսիք են «1720-ական թթ. Հայոց ապստամբությունը եւ ցեղասպանական ճնշամիջոցների Ենթարկվելու վտանգը», «Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը եւ Հայաստանի ռազմավարական անվտանգությունը», «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն)», «Հայ գինվորականության պատվո վարժականունը (4-5-րդ դարեր)», «Մայրենի լեզուն եւ ազգայնականության սկզբնավորումը (հայկական եւ եվրոպական սկզբնադրյուրների համեմատական քննություն)», «Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի», ինչպես նաև այլ ուսումնասիրություններ, որոնք հրապարակվել են հայերենով, անգլերենով եւ ռուսերենով: Առաջին համաժողովին չիրավիրվեց մի մարդ, որը Ղարաբաղյան դիմակայության ամենածանր պահին ներկայացնում էր Հայաստանը ԵՎՀԽ-ում, ակտիվ մասնակցություն բերում բանակցային գործընթացներին, պատմության եւ միջազգային հարաբերությունների ինտիրներին նվիրված՝ անգլերենով եւ ռուսերենով դասախոսել է Սան Ֆրանցիսկոյի, Վաշինգտոնի, Սիրակուզի (Նյու Յորքի նահանգ), Բոստոնի, Լոնդոնի, Մանչեսթրի, Էդինբուրգի, Աբերդինի, Ստոկհոլմի, Ուլսաւալյի, Վթենքի համալսարաններում եւ ինստիտուտներում: Համաժողովի մասնակիցների ցուցակից Այվազյանին դուրս հանելուն, այս, մեղմ ասած, անհեթեթության մասին, տրամաբանական է, որ բուռն անդրադան հայկական զանգվածային տեղեկատվության միջոցները: Ուստի դժվար չէ կռահել, որ դեռ մինչեւ այդ ցավալիորեն հիշարժան (ոչ միայն ատենախոսի համար) օրը ամպեր էին կուտակվում ապագա հայցորդի գլխին: Եվ զարմանալի ոչինչ չկա, որ ատենախոսությունը, ավելի ճիշտ՝ նրա պաշտպանությունը տապալվեց: Տրամաբանական էր նաև այն, որ Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսության տապալումից անմիջապես հետո արձագանքներ եղան ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գելորգ Տեր-Ստեփանյանը,

ծանոթանալով ինտերնետային անդրադարձներին, Կանադայից գրում է. «Ինձ շատ վշտացնում է, որ մենք, արտաքին թշնամիների դեմ համախմբված հանդես գալու փոխարեն, զբաղված ենք ինքնառչնչացմամբ...»: Ընդ որում, իննսունվեցամյա գիտնականն ընդգծում է. «Թեեւ ես չեմ կարող նաեւ թաքցնել ուրախությունս, որ Հայաստանում ապրում եւ աշխատում են երիտասարդ գիտնականներ, որոնք չեն փորձում հասնել բարեկեցության ու հաջողության օտարության մեջ, այլ պատրաստ են իրենց իդեալներին հասնելու համար կրել բարոյական եւ նյութական գրկանքներ»: Անդրադարձների մեջ թվի մեջ կար նաեւ նամակ, որ ստորագրել էին Սոս Սարգսյանը, Լեւոն Անանյանը, Պերճ Չեյթունցյանը եւ ես: Նամակը լույս էր տեսել «Ազգ»-ում, «Գոլոս Արմենիի»-ում եւ «Հայոց աշխարհ»-ում:

Շուտով «Ազգ»-ը տպեց նաեւ անձամբ խոնարհիս հասցեագրված մի «Բաց նամակ»: Նրա հեղինակը, որ ներկայացնում է ԵՊՀ «Հայոց պատմության ամբիոնը», բացահայտորեն քամահրելով մեր (եւ ոչ միայն մեր) անդրադարձը, որոշել է տերմինաբանության վերաբերյալ հրապարակային մի դաս տալ՝ «պատմագիտություն» եւ «պատմագրություն» հասկացությունները համարելով «բոլորովին տարբեր» ու նրանց միշեւ նշմարել «համակարգային» զանազանություն: Զցանկանալով բանավեճի մեջ մտնել, կուգեի հրել «Բաց նամակի» հեղինակին հանրագիտարանային հրատարակությունները, որտեղ ասվում է, որ պատմագրությունը ոչ միայն «գիտություն է պատմական գիտելիքների զարգացման եւ պատմական հետազոտությունների եղանակների մասին», այլև «պատմական երկերի ամբողջություն, ասենք՝ խորհրդային շրջանի պատմագրություն, կիեւան պետության պատմագրություն»: Առավել լակոնիկ է «Օտար բառերի եւ արտահայտությունների նորագույն բառարանը» (ռուսերեն). «Պատմագրությունը գիտություն է, որն ուսումնասիրում է պատմական գիտելիքների զարգացումը, երբեմն գործնականում նույն է, ինչ պատմությունը»: Ընդգծել եմ ոչ թե իմ (մեր) ընդդիմախոսին, ինչպես ասում են, «խոցելու» համար՝ նրա կողմից այս երկու հասկացությունները «բոլորովին (!? Զ. Բ.) տարբեր» նկատելու եւ «համակարգային» զանազանում դնելու առթիվ, այլ որպեսզի հիշեցնեմ գլխավորը. չ՞ որ մենք խոսել ենք իրականում այլ, ավելի կարեւոր բանի մասին:

«Բաց նամակն» ավարտվում է թախանձական հորդորով, թե հասցեատերը, այսինքն՝ ես, ավելի լավ կլինի զբաղվեմ հրապարակախոսությամբ, քանզի, ինչպես պնդում է հեղինակը, ես «իրոք, ասելիք եւ այս ել շատ ասելիք» ուսեմ: Ինձ մնում է ընդամենը շնորհակալություն հայտնել խորհրդի համար եւ իսկապես զբաղվել «իմ» հրապարակախոսությամբ, որը, նույն այդ

համաշխարհային հանրագիտարանային հրատարակությունների համաձայն, ներկայացնում է ստեղծագործությունների մի տեսակ, այնպիսի ստեղծագործությունների, որոնք նվիրված են հասարակության այժմեական խնդիրներին եւ ընթացիկ կյանքի երեւլյթներին, եւ որը՝ որպես հասարակական կարծիքի տարբեր տեսակետների արտահայտման միջոց, կատարում է կարեւոր քաղաքական ու գաղափարախոսական դեր:

Ես կփորձեմ խնդիրը ներկայացնել բացառապես որպես հրապարակախոս, իմ առջեւ տեսնելով այն ընթերցողին, որին չի վիճակվել մանրամասնորեն (դա շատ կարեւոր է) ծանոթանալ մեզ բոլորիս հուզող հարցին: Ծանոթանալով Այվազյանի «գործին»՝ ես հաճախ մտաբերում եմ իմ ուսուցչի՝ Ռյազանի բժշկական ինստիտուտի վիրաբուժության պրոֆեսոր Բորիս Պավիլ Կիրիլլովի բավականին հայտնի խոսքերը. «Կներեք պարզունակության համար, բայց ձեռքս սրտիս դրած կասեմ. թեկնածուական աստիճանը հայցորդին շնորհվում է, եթե իր աշխատանքում նա կարողացել է ընդդիմախոսներին հիմնավորաբար համոզել, որ կարող է գրադարձել գիտությամբ: Իսկ դոկտորականը՝ պայմանով, որ անաշառ կերպով դիտարկվի ոչ միայն պաշտպանության ներկայացված աշխատությունը, այլեւ հայցորդի աշխատանքների ամբողջությունը, գիտության մեջ նրա եական ներդրումը» (ընդգծումն իմն Է՝ Զ. Բ.):

Ելնելով վիրաբույժ Կիրիլլովի (գուցե ԲՈՅ-ի գրված եւ չգրված կանոնների առումով վիճելի) հայեցակարգից, կուզենայի ընթերցողի ուշադրությանը ներկայացնել հատվածներ ատենախոսության պաշտպանության ողջ ընթացքում կատարված սղագրությունից (ձայնագրված եւ տեսագրված), հարկավ, բաց թողնելով այն ամենն, ինչ վերաբերում է գուտ գիտական բանավեճին:

Մանվել Չուլալյան, ակադեմիկոս, պաշտոնական ընդդիմախոս, ԵՊՄՀ «Ըստհանուր պատմության ամբիոն»-ի վարիչ. «Արմեն Մարտիրիս Այվազյանը մեր լայն գիտական հասարակությանը հայտնի է որպես մի շարք խիստ արժեքավոր աշխատությունների հեղինակ: Ես դրանցից մեկի՝ «Յայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» աշխատության մասին «Պատմա-բանասիրական հանդեսում» հոդված եմ հրատարակել: Շատ բարձր մակարդակի աշխատություն է: Եվ ոչ միայն այդ մեկը: ...Ես շատ բարձր եմ գնահատում նրա ատենախոսությունը... Նա, իրավամբ, պատկանում է այն հայ դեռեւս երիտասարդ պատմաբան մասնագետների շարքին, որին վիճակված է խոշոր դեր կատարել մեր պատմագրության առաջ դրված կնճռոտ հարցերի լուսաբանման բնագավառում: Արմեն Մարտիրիս Այվազյանը եւ նրա նմանները մեր արդի

հայագիտության ապագան են»:

Յրաչիկ Սիմոնյան, ակադեմիկոս, Մասնագիտական խորհրդի անդամ. «Պատմության ինստիտուտի ավանդություններից մեկն է եղել, որ երբ քննարկում են բաժիններում դիսերտացիոն աշխատանքը, ապա անպայման հեղինակին կանչում են, հատկապես եթե շատ են դիտողությունները: Բայց այս դեպքում ատենախոսը նույնիսկ տեղյակ էլ չի եղել, թե ի՞նչ են գրում, ինչպես են գրում: Ինչ վերաբերում է ԵՊՀ «Հայոց պատմության ամբիոնին», ես վշտացած եմ ամբիոնի կարծիքի համար, որովհետեւ այսպիսի ցածրորակ, ցածր «պրոբի» կարծիքը պատիվ չի բերում ո՛չ ամբիոնին եւ ո՛չ էլ որեւէ մեկին»:

Յրաչիկ Սիմոնյանը, որ հրաշալի գիտի ատենախոսությունների «արարման» ոչ բարդ խոհանոցը, իր ելույթում զարմանք հայտնեց, իր խոսքերով ասած, այն «ստախանովյան հարվածային աշխատանքի» վերաբերյալ, որի արդյունքում նման դեպքի համար ստացվել է տարօրինակ հաշվարկ՝ «9 կողմ» եւ «1 ձեռնպահ»: Այսպիսին եր ամբիոնի՝ հայցորդի ատենախոսության առթիվ գրված կարծիքի թվաբանությունը: Պարզվում է, որ ամբիոնում ցանկացած ատենախոսություն կարդում են երկու-երեք մարդ: Սիմոնյանն ընդգծում է. «Երեք հոգի ել չե, երկու հոգի», ընդունի ավելացնելով. «Երբեք ամբիոնում ատենախոսություններին տված որեւէ կարծիքի վրա մենք թիվ չենք գրել... «պատասխան Չեմբեռլենին» եք տվել, միահամու՞ռ, միածու՞յլ, եսպես երկաթյա դիսցիպլինայով կարծիք եք գրել: Ես նրան կողմ եմ քվեարկելու, որովհետեւ ես հպարտանում եմ, որ մենք ունենք իր նման երիտասարդ, այսքան բարձր գիտելիքների տեր, այսքան ամուր կամք ունեցող երիտասարդ: Եվ կան երեւի այսպիսիները, որոնց ձեռքում են մեր պատմագրության ապագան»:

Վարդգես Միքայելյան, ակադեմիկոս, Մասնագիտական խորհրդի անդամ. «Ես դիսերտացիային ծանոթ եմ, ավտորեֆերատին ծանոթ եմ եւ շատ բարձր կարծիքի եմ: Մենք պետք ե կարողանաք գնահատել մեր երիտասարդ կադրերին: Եվ ես հիացած եմ, սա ասում եմ անկեղծ սրտով: Ունալի Գրիգոր Սյունին չե, որ պետք ե որոշի այստեղ, թե Միքայելյան Վարդգեսն այստեղ ձայն է տալու, թե ոչ»:

Բարեկեն Յարությունյան, պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ «Հայոց պատմության ամբիոն»-ի վարիչի պաշտոնակատար, Մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ. «հարցադրումն այնպիսին է, թե դա կապված է ինչ-ինչ աշխատության լույս տեսնելու հետ: Յենց սկզբից ասում եմ. այդ աշխատությունը լույս է տեսել Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ, որի նախագահը եղել եմ եւ իմա էլ գտնում եմ, որ այդ

աշխատանքը որպես ատենախոսություն, որպես կուռ գործ շատ ավելի բարձր է, քան այսօր ինչ որ Ներկայացված է ատենախոսի կողմից: Խնդիրը չի վերաբերում նրա ունակություններին. որ ինքը ունակ է՝ համայն աշխարհին կարող եմ հայտնել, որ ինքը օգտակար մարդ է այս հանրապետության համար՝ երկու կարծիք լինել չի կարող, բայց այսօր խոսքը գնում է ատենախոսության մասին... իսկ ինչ վերաբերում է նրա ունակություններին, ես ավելին ասեմ՝ նա աշխատել է մեր լաբորատորիայում, ես նրա ունակությունները հիանալի գիտեմ, որ նա շատ ընդունակ մարդ է, հիանալի գիտեմ, ինքն էլ դա գիտի: Բայց խոսքը վերաբերում է տվյալ դեպքում այս աշխատությանը եւ ոչ թե մեկ այլ աշխատության... Նրա ծառայությունները մեծ են: Բայց խոսքը միայն այս աշխատության մասին է»:

Միեր Կարապետյան, պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՄՀ «Հայոց պատմության ամբիոն»-ի վարիչ, Մասնագիտական խորհրդի անդամ. «Ես՝ իբրեւ գիտխորհրդի անդամ, ամենայն մանրամասնությամբ կարդացել եմ աշխատանքի ավտոռեֆերատը, կարդացել եմ նաև նրա ատենախոսական գիրքը: Չթաքցնեմ, որ ինձ հայտնի էին ինչ-ինչ կանխակալ պատկերացումներ, դա երեւի բոլորիդ էր հայտնի: Եվ դրա համար որոշել էի, որ պետք է ամենայն ուշադրությամբ հետեւեմ պաշտպանության ընթացքին: Ուզում եմ խոսել այն փայլուն տպավորության մասին, որ թողեց ատենախոսն ինձ վրա: Իր առարկությունները, մեծի մասամբ, հիմնավոր են: Այս ամբողջ ընթացքում նա ցուց տվեց, որ լիակատար չափով արժանի է ստանալու պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը, որովհետեւ մենք գործ ունենք անառարկելիորեն ձեւավորված փայլուն գիտնականի հետ»:

Աշոտ Մելքոնյան, պատմական գիտությունների դոկտոր, Պատմության ինստիտուտի տնօրեն, Մասնագիտական խորհրդի անդամ. «Արմեն Այվազյանի հետ ես ընկերություն եմ արել, մտերիմներ ենք եղել, շատ հարցերում համախոհներ ենք: Ես իրեն բազմից ասել եմ՝ «Կեցցե՞ս այն հրաշալի աշխատության համար, որ գրել ես ամերիկյան պատմագրության կապակցությամբ: Ես ունեմ մի գործնական առաջարկություն. կարծում եմ, որ նման պայմաններում քվեարկությունը, ինչ արդյունք էլ ունենա, օբյեկտիվ չի ոհտվելու: Գտնենք ձեւը, քվեարկությունը հետաձգենք»:

Լիլիթ Արզումանյան, բան. գիտ. դոկտոր, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահի տեղակալ. «Ես արդեն ուղիղ տասը տարի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահի տեղակալ եմ: Այս պաշտպանությունը զարմանալիորեն ընտիր պաշտպանություն էր, որովհետեւ առաջին անգամ իրոք կային հակադիր կարծիքներ, առաջին

անգամ ես տեսա պաշտպանություն, որ մենք միշտ երազել ենք»:

Վլադիմիր Ղազախեցյան, պատմական գիտությունների դոկտոր, Մասնագիտական խորհրդի անդամ. «Ես ղեկավարվում եմ ավտոռեֆերատով, որին լավ ծանոթացել եմ, եւ ղեկավարվում եմ այսօրվա քննության ընթացքով: Ստացա հիանալի տպավորություն: Ընդ որում, բացասական կարծիքների մեջ ես լուրջ գիտական դիտողություններ չեմ տեսնում՝ «ծավալը քիչ է, կառուցվածքը՝ այսպես չէ»: Մեր առջեւ է հասունացած գիտնական, որին ես կրկնակի կարող եմ դրական քվեարկել»: Մեն Արեւշատյան, ակադեմիկոս. «Ծատ դիպուկ էր Լիլիթ Արգումանյանի խոսքը, որ սա հասունացած գիտնականի, հասունացած դոկտորի «իսկական պաշտպանություն էր»:

Մատենադարանի տնօրենը (այդ հաստատությունում է գրվել ատենախոսությունը) Նրբորեն օգտագործեց «պաշտպանություն» բառի ուղղակի իմաստը՝ նկատելով, որ դա իսկական պաշտպանություն էր «բոլոր առարկությունների, քննադատական դիտողությունների եւ այլնի» դեմ: Նա նաեւ հիշեցրեց, որ Մատենադարանում Այվազյանի աշխատանքը քննարկվել եւ մշակվել է պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանի անմիջական մասնակցությամբ, որը հատկապես այդ շրջանի ճանաչված մասնագետն է:

Երբ ես շուրջ չորս ժամ դիտում էի պաշտպանության տեսագրությունը (դա շատ հետաքրքրական եւ ուսանելի պատմական վագերագիր է), հատուկ ուշադրություն դարձրեցի ակադեմիկոս Արեւշատյանի ելույթին: Անսալով նրա մեղմ ձայնին, ինձ որսում էի այն մտքի վրա, որ ինչ-որ անհարմարության զգացում եմ ապրում իմ կողմից անչափ հարգված մարդու, նրբազգաց մտավորականի հանդեպ: Ինչպես եւ այդ կարգի բոլոր մարդիկ, նա՝ մաքուր իր մտադրություններում եւ մտքերում, չափից ավելի միամիտ էր: Մասնագիտական խորհրդին տեղեկացնելով, որ Ե. Բաղդասարյանի բաժնում աշխատանքը քննարկվել է Մատենադարանի այլ աշխատակիցների հետ մեկտեղ եւ նրան անաչառ գնահատական է տրվել՝ երաշխավորվելով պաշտպանության, Արեւշատյանն ասաց. «Ես շատ ուրախ եմ, որ մեր կարծիքը լիովին համապատասխանում է պաշտոնական ընդդիմախոսների կարծիքներին եւ հանձնարարականին: Պետք է վստահել այդ կարծիքներին եւ ղեկավարվել դրանցով: Ես կարծում եմ, որ ճիշտ կկողմնորոշվեն Մասնագիտական խորհրդի անդամները, եւ մենք շնորհալի աշխատող, նպատակասլա՞ց գիտական գործունեություն ծավալած Արմեն Այվազյանին կկարողանանք գնահատել՝ այսօր շնորհելով նրան պատմական գիտությունների դոկտորի աստիճանը»:

## Վերջը հաջորդիկ

AZG Daily #009, 01/23/2004

<http://www.azg.am/start.pl?lang=AM&num=2004012412>

ԱԿԻՋԲԸ ՆԱԽՈՐԴ ԻԱՄԱՐՈՒՄ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԱՌՈԴ Ե, ՈՐԸ ԶՈՐ ՊԵՏՔ Է ՊԱՐԵԼ

### ՉՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Հետաքրքրական կլիներ իմանալ, թե ինչո՞ւ ինձ ուղղված «Բաց նամակ»-ի հեղինակը չի մեղադրել, ասենք, ֆիզիկոս գիտնական, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանին, որ նա, իր ֆիզիկայով զբաղվելու փոխարեն, իրեն թույլ է տվել ելույթ ունենալ Մասնագիտական խորհրդում, ուր քննարկվում են ոչ թե ֆիզիկայի, այլ պատմագրության խնդիրներ: Ռաֆայել Ղազարյանը, ինչպես եւ բոլոր նրանք, ովքեր հետագայում արձագանքեցին Արմեն Այվազյանի ատենախոսության պաշտպանության տապալմանը, իրոք չի խոսել պատմագիտության մասին, որպես այդպիսին, ոչ եւ բանավեճի նրբերանգների մասին: Նա խոսել է բարոյականության մասին. «Ես գիտական պաշտպանությունների այս խորհրդի անդամներից խնդրում եմ միայն վեր կանգնել սուբյեկտիվ ինչ-որ պահերից, վեր կանգնել ինչ-որ անգամ հնարավոր հանձնարարականներից եւ քվեարկել խոճի մտոք»: Եվ ավելացրել. «Ես երեսուն-քառասուն տարի ֆիզիկական եւ ճարտարագիտական գիտական պաշտպանության խորհուրդների անդամ եմ եւ մեծամտաբար, ինչպես հատուկ է ֆիզիկոսներին, համոզված եի, որ ճշգրիտ գիտություններ են միայն ֆիզիկան, կամ, ասենք, տեխնիկան եւ այլն: Այսօր Արմենը ինձ համոզեց, որ պատմությունը ճշգրիտ գիտություն է, միանգամայն ճշգրիտ գիտություն»:

Ես հարկ չեմ համարում այստեղ վկայակոչել նիստի ժամանակ ինչած «կողմ» եւ «դեմ» փաստարկները: Չեմ ցանկանում մեջբերել պաշտոնական երաշխավորագրերի եւ կարծիքների տեքստերը: Միայն կիհշեցնեմ, որ վերջինը ելույթ ունեցավ ինքը՝ Մասնագիտական խորհրդի նախագահ, Գիտությունների ակադեմիայի փոխնախագահ-գիտքարտուղար Վլադիմիր Բարիսուդարյանը: Կրերեմ այն մտքերի հատվածները, ուր ինչում է Այվազյանի անձի՝ որպես գիտնականի, գևահատականը. «Մեզ համար

ավելի կարեւոր է այն երիտասարդը, որը Արմենն է եւ մեր պատմության ապագան է (ընդգծումն իմն է՝ Զ. Բ.) Ես ամերիկյան հայագիտության մասին գիրքը կարդացել եմ, նրան հրավիրել եմ եւ ասել՝ «Չատ լավ գիրք է, շատ տաղանդավոր գիրք է, ես ել միշտ ինչքան կարող եմ, ձեզ կպաշտպանեմ»: Մյուս կողմից, տեսեք ինչ դժվարության առաջ է ընկեր Այվազյանը մեզ կանգնեցրել. աղբյուրները մանրակրկիտ հետազոտել է, գրականությանը փայլուն տեղյակ է, աղբյուրներին փայլուն տեղյակ է, լեզուների փայլուն իմացություն, լավ անալիզ անող, շնորհալի երիտասարդ է: Այսինքն, իմ կարծիքը հետեւյալն է՝ ներկայացրած աշխատանքը իր ուսակություններին համապատասխան աշխատանք չէ: Թույլ աշխատանք է ներկայացված: Մի կողմից աշխատանքը թույլ է, մյուս կողմից՝ ևա լիովին արժանի է դոկտորականի: Ես դրանում չեմ կասկածում, իսկապես շնորհալի գիտաշխատող է»:

Ելույթի ամենավերջում Մասնագիտական խորհրդի նախագահն ընդգծեց այն փաստը, որ ինքը համաձայն չէ ատենախոսին արված որոշ դիտողությունների եւ, ինչպես ակադեմիկոս Դազարյանը, առաջարկեց քվեարկել խղճի մտոք:

Քվեարկեցին՝ կողմ – 7, դեմ – 8, 3 քվեաթերթիկ էլ պարզվեց, որ անվագեր է: Ի դեպ, այնքան էլ հասկանալի չէ, թե տվյալ կոնկրետ դեպքում, երբ քվեարկում են ընդամենը տասնութ մարդ, ինչպես պատահեց, որ երեք քվեաթերթիկ (իսկ դա ընդհանուր թվի մոտ 17 տոկոսն է) հանկարծ անվագեր դարձավ:

Ոհա եւ ողջ թվաբանությունը: Կարծես որեւէ արտասովոր բան չի էլ կատարվել: Բայց չե՞ որ իրականում կատարվել է: Կատարվել է անհավանականը: Կատարվել է այն, որ մարդկությունը բազմից անցել է ինում: Դեռեւս իին Յօնմում իրավաբաններն ու փիլիսոփաները պահանջում էին խստորեն պահպանել «Արգումենտում ադ հոմինեմ» սկզբունքը, քաջ գիտակցելով, թե ինչ ցավալի հետեւանքներ են լինում, երբ որպես ապացույց բերվելիք փաստերի եւ դատողությունների փոխարեն «անցնում են անձին»: Արմեն Այվազյանի դեպքում մենք ականատեսն ենք, որ ինդիրը ոչ այնքան բուն ատենախոսությունն է, որքան իր իսկ անձը: ՉԵ՞ որ պաշտպանության մասին ընդհանրապես խոսք չկար, երբ, ինչպես արդեն ասվել է, նրան ուղղակի թույլ չտվեցին մասնակցել հիշատակված հայագիտական համաժողովին, որին, ելնելով իրերի տրամաբանությունից ու պաշտպանության ընթացքում թե՛ «մերոնց», թե՛ «ձերոնց» ինչեցրած դատողություններից, գևահատականներից, մակդիրներից, պարտադիր կերպով պետք է հրավիրվեր «տաղանդավոր», «շնորհալի», «հարցախույզ», «լուրջ», «վառ», «փայլուն» հայագետը, որին բազմաթիվ հեղինակավոր

մասնագետ գիտնականներ ճանաչում են որպես «հայ պատմագրության ապագա»: Ավելին, մամուլում հնչեցին Յայաստանի ԳՎՈ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանի, ինչպես նաև ակադեմիկոսներ Վ. Բարիսուղարյանի եւ Յ. Սիմոնյանի կարծիքները, թե «սույն համաժողովի գումարման դրդապատճառների մեջ պետք է փնտրել Ա. Այվազյանի աշխատությունների լույս ընծայումը»:

Պաշտպանության ընթացքում, ինչպես ասվեց, որոշ ընդդիմախոսների խոսքում կարմիր թելի պես անցնում էր այն «կրկներգը», թե նրա «այն» գիրքը տաղանդավոր է, դոկտորականի արժան, համարձակ, իսկ ահա «այս մեկը»՝ թույլ է եւ առհասարակ անարժան հեղինակի տաղանդին: Իսկ սրանում արդեն քողարկված է չար մտադրություն: Ինքս ինձ թույլ չտալով մտնելու գիտության թափուտների մեջ (թեեւ, ինչպես ասում են, մատիտը ձեռքիս եմ կարդացել «Յայոց Եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» ատենախոսական գիրքը, որն, ի դեպ, լույս է տեսել ոչ միայն «Նեղ» մասնագետների համար) նշեմ, որ պաշտպանության ընթացքում, շատ գիտնականների կարծիքով, ատենախոսի հասցեին որեւէ լուրջ, սկզբունքային առարկություններ ու դիտողություններ գործնականում չեն հնչել: Այս կապակցությամբ ընթերցողի ուշադրությունը կուգենայինը հրավիրել ուղղակի սպանիչ մի մանրութի վրա:

ԵՊՐ «Յայոց պատմության ամբիոն»-ի աշխատակիցը, այսօրինակ դեպքի համար օգտագործելով բավականին տարօրինակ նամականի ժանրը, իր «Բաց նամակում», ինչպես վերը նշել ենք, տիեզերական կոծ է բարձրացնում «պատմություն» եւ «պատմագրություն» եզրույթների շուրջ, բարձրածայն հայտարարում է, որ «մեր պատմագիտությունը վստահելի ձեռքբերում է», սակայն այսքանով հանդերձ լրության է մատնում «Գոլոս Արմենիի»-ում դրանից ընդամենը մեկ շաբաթ առաջ տպագրված հրապարակումը, ուր Լեւոն Միքայելյանը գրում է. «...կազմակերպված ձեւով տապալված պաշտպանությունը հօդս ցնդեցրեց երեսպաշտական եւ մեր պատմագիտության հետագա զարգացման համար, ըստ եռթյան, կործանարար՝ արտաքին բարեհաջողության եւ համաձայնության այն մթնոլորտը, որը, մասնավորաբար, ապարդյուն փորձում էին աշխարհին ի ցույց դնել այս տարվա (2003-ի՝ Զ. Բ.) սեպտեմբերին կայացած Յայագիտական առաջին համաշխարհային կոնգրեսի կազմակերպիչները»: Այս ահավոր մեղադրանքի հիմնավորումը, սակայն, «Գոլոս Արմենիի» թերթի հեղինակին տալիս է ինքը՝ Այվազյանը: Կարդալով «Յատուկ պատվեր մասնագիտական խորհրդին» հոդվածը՝ ես գրադարակից վերցրեցի Ա. Այվազյանի «Յայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն)» գիրքը: Նորից

հիշեցնեմ ընթերցողին, որ սա հենց այն գիրքն է, որը պաշտպանության ժամանակ այդպես հելիիեւ գովաբանում էին թե՝ ատենախոսի համախոհները, թե՝ հակառակորդները: Եվ առաջին իսկ էջում կարդում եմ: «Ունեմ բազմաթիվ ամերիկացի ընկերներ, որոնց հարգում եւ սիրում եմ: Հետեւաբար՝ քննադատական սուր ուղղվածություն ունեցող այս աշխատության մեջ չարժե փնտրել հակամերիկյան պարզունակ մոտիվներ: Այդպիսիք չկան: Գիրքը գրվել է գիտությունն ու ճշմարտությունը պաշտպանելու եւ հաստատելու անկեղծ մղումով: Սույն հետազոտությունը մեզ բերել է այն հաստատ համոզման, որ ամերիկյան ու առհասարակ միջազգային հայագիտության խնդիրն ու ապագան ամենից առավել կախված են հայաստանյան հայագիտության մակարդակից եւ վտանգված ապագայից» (ընգծումն իմ Ե՝ Զ. Բ.):

Եվ այսպես, սեւով սպիտակի վրա Արմենը գրում է, որ հայրենական հայագիտության ճակատագիրը Վտանգված է: Իր գրքում Այվազյանը հարցադրում է անում. «Որո՞նք էին, ուրեմն, այն պատճառները, որ հայաստանցի հայագետներին խանգարեցին ժամանակին նշմարել եւ հակազդել Արեւմուտքում հայոց պատմությունը խեղաթյուրելու աճող միտումներին»: Ու ինքն էլ պատասխանում է հարցին՝ բերելով պատճառ-գործոնների մի ահազին քանակություն, որ աղետալի ազդեցություն է ունեցել հայագիտության զարգացման վրա՝ սկսած XIX դարի վերջից մինչեւ այսօր: Դա եւ՝ «արեւմտյան հայագիտության նկատմամբ ծեւավորված անքննադատ վերաբերմունքն» է, եւ՝ «սովետահայ պատմագիտական դպրոցի» լեզվական արգելքը, եւ՝ «ազգայնականության մեջ չմեղադրվելու քնական վախը»: Ե՛վ այն փաստը, որ մեր երկրում երկար ժամանակ «անհարկի անտեսվել են քաղաքագիտական ուղղվածություն ունեցող պատմագիտությունը եւ պատմատեսությունը»: Դա նաեւ այն է, որ «արեւմտյան «հայագիտությունը» իր առջեւ դրված խնդիրներն իրականացնում են ո՞չ թուրք-ադրբեջանական գոեհիկ կոպտությամբ, այլ շատ ավելի նուրբ, արտաքնապես՝ գիտական ընդգծվածությամբ եւ ակադեմիական շղարշով: Այս կարգի կեղծարարությունը հարաբերականորեն դժվար նշմարելի է, ու հետեւապես՝ առավել վտանգավոր»:

Իր գրքում Արմեն Այվազյանը դիմակագերծել է արեւմտյան՝ մասնավորապես ամերիկյան այն հայագետներին, որոնք ավանդաբար ոչչեցից չվախենալով՝ վաղուց արդեն նվաստացրել եւ պղծել են հայ ժողովրդի պատմությունը: Նրանցից շատերը հանդես են գալիս երկու կերպարանքով եւ՝ պատմության մեջ, եւ՝ գաղափարախոսության մեջ: Եվ սա հավանաբար այն դեպքն է, եթե ասում են, որ «պատմաբանները կեղծում

Են անցյալը, գաղափարախոսները՝ ապագան»: Ի՞նչ արժե միայն «Հայացք դեպի Արարատ: Հայաստանը նոր պատմության մեջ» զրպարտչագրի հեղինակ Ռուսակ Գրիգոր Սյունիի (նրա մասին ոչ առանց հեզնանքի արտահայտվեց ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը պաշպանության ժամանակ) լկտի խոստովանությունը, թե իր նպատակն է «կազմալուծել» հայ «քաղաքական ազգայնականների քաղաքական գաղափարախոսության հիմքը, ըստ որի հայերի շարունակական գոյությունը որպես պատմական ժողովուրդ, նրանց առաջացումը Հայկական լեռնաշխարհում նրանց գինում է ինքնորոշման եւ պետականության իրավունքով ու նաեւ պատմականորեն վավերացված պահանջատիրությամբ այն տարածքների նկատմամբ, որ կազմում են Հայաստանը»:

Քիշեցնենք, որ Սյունիի գիրքը հրատարակվել է ԱՄՆ-ում 1993 թվականին, երբ Աղրբեջանի կողմից պարտադրված՝ Արցախյան հայրենական պատերազմում հայ ժողովուրդը մեծագույն զոհերի գնով պաշտպանում էր իր Վերածնված պետականությունը: Եվ հենց այդ ժամանակներից ի վեր շատ արեւմտյան, կրկնում եմ, հատկապես ամերիկյան հայագետներ եւ կովկասագետներ աներեւակայելի եռանդով կաշվից դուրս են գալիս՝ աշխարհին «ցուց տալու», որ «աղրբեջանցիների հնագույն նախնիները եռել են աղվանները», որոնք ել կառուցել են Գանձասարի տաճարը, որ քաղաքական քարտեզի վրա Հայաստանն ընդամենը «քաղաքական սահմաններ չունեցող աշխարհագրական մի ինչ-որ հիշողություն է», որ ո՞չ խորենացին, ո՞չ Եղիշեն պատմիչներ չեն բարիս բուն իմաստով, որ հայը երբեք չի պայքարել իր ազատագրման համար: Այս ամենի մասին իր «Քննական տեսության» մեջ հանգամանորեն գրում է Արմեն Այվազյանը, որին հենց այս աշխատանքի համար էին այդքան ջերմորեն դրվատում: Ուրեմն ինչո՞ւ այսօր, երբ պատմագիտության, հատկապես պատմագրության, դերն անհրաժեշտ է հավասարեցնել հզոր գենքի, չոր վառողի, ինչո՞ւ, ինչպես գրում է ակադեմիկոս Տեր-Ստեփանյանը, համախմբված, միահամուռ ուժերով Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության կեղծարարների դեմ կրիվ տալու փոխարեն, մենք լրում ենք: Եթե Այվազյանը ճիշտ չէ, ապա ինչպե՞ս հասկանալ, որ դոկտոր Բարկեն Յարությունյանի բառերով «շատ ուսակ մարդու» աշխատանքը լույս է տեսել իր դեկավարած «գիտական խորհրդի որոշմամբ»: Ինչպե՞ս հասկանալ Վլադիմիր Բարխուդարյանի այն բառերը, որ «լավ Վերլուծաբանը», «շնորհալի երիտասարդը» գրել է «շատ լավ գիրք, շատ տաղանդավոր գիրք»:

Վերջապես ինչպե՞ս հասկանալ նաեւ այն, որ Մասնագիտական խորհրդի

Նախագահի կարծիքով, նույնիսկ Այվազյանի այն գիտական աշխատանքը, որը մերժվեց պաշտպանության ժամանակ, արժանի է, որպեսզի «շնորհալի գիտաշխատող» ստանա դոկտորի գիտական աստիճան: Իսկ եթե իրավացի է երիտասարդ պատմաբանը, ապա Էլ ինչո՞ւ է այս իրարանցումը: Այվազյանի ատենախոսության ճակատագիրը, որն անցած տարվա վերջին հուզեց ու վրդովեցրեց հասարակությանը, մենք չենք, որ պիտի որոշենք: Դրա համար կա Բարձրագույն որակավորման հանձնաժողով: Ես ըստհանրապես չեմ կարծում, թե այսօր հարցերի հարցը՝ պատմագիտական դոկտորի գիտական աստիճան շնորհել, թե չշնորհելն է աղմկահարույց ատենախոսության հայցողին (ավելի ճիշտ՝ խոսքն ատենախոսության աղմկահարույց պաշտպանության մասին է): Այս կոնկրետ հարցն ինձ համար շատ էլ սկզբունքային չենք: Այն ավելի շուտ ՅՈՎՈՎԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ շարքից է: Արդարեւ, ամեն ոք չենք, որ կարող է նմանվել ռուս ականավոր բանաստեղծ եւ Ենցիկլոպեդիստ Վասիլի Անդրեևիչ Ժուկովսկուն, որը բացահայտելով երիտասարդ Պուշկինի անվիճելի տաղանդը՝ նրան նվիրեց իր դիմանկարը, մակագրելով. «Հաղթած աշակերտին՝ պարտված ուսուցչից»՝ եւ դրանով Էլ ավելի խորը հետք թողեց սերունդների երախտապարտ հիշողության մեջ: Ես, իհարկե, հասկանում եմ, որ օրինակն այնքան էլ կոռեկտ չենք, քանի որ Ժուկովսկին, մինչեւ ռոմանտիզմ քարոզելը, եղել է սեստիմենտալիզմի շատագով: Բայց մեր դարև ուրիշ է: Այս ոչ միայն գործնական է, դժուի է, այլեւ դաժան: Դա է հաստատում նաեւ իրադրությունը, որի մեջ է հայտնվել մեր ժողովուրդը: Իրադրություն, երբ բոլոր գիտություններից ռազմավարական առումով թերեւս ամենակարեւորն ու ամենաանհրաժեշտը պատմությունն է: Նույն այն պատմությունը, որի մասին Փրանսիացի պատմաբան Ամարոլ Բարանտը գրել է, փորձելով կանխել արհավիրքը, որ շարժվում էր իր հայրենիքի վրա. «Պատմությունը չպետք է ինքն իրեն նսեմացնի այն աստիճան, որ դառնա ընթացիկ թշնամանքի ու հիշաչարության արձագանք»:

Երիտասարդ պատմաբան Արմեն Այվազյանի (Եւ ոչ միայն նրա) աշխատությունները մեր աչքերը բացում են այն իրողության վրա, որ այսօրվա «ոչ՝ պատերազմ, ոչ՝ խաղաղություն» բարդ իրավիճակում մեզ պատերազմ է հայտարարված, եւ ի լրումն եղածի, պարզ ասենք՝ նաեւ պատմագրական պատերազմ: Յիշենք Օտտոն ֆոն Բիսմարկի բազմից մեջքերվող միտքը. «Ֆրանս-պրուսական պատերազմը շահեց գյուղական ուսուցչը»: Ինչպես հայտնի դարձավ Գերմանիայի առաջին կանցլերի կենսագրությունից, խոսքը վերաբերում էր, առաջին հերթին, «պատմության ուսուցիչն»:

Կարծես մենք այդպես ել դեռ չենք գիտակցել, որ վերջապես անկախություն

ու պետականություն ենք ձեռք բերել՝ դարձել ազատ ժողովուրդ: Կարծես մենք արդեն մոռացել ենք, որ աշխարհում գրապարտվում են միայն զոհերը: Եվ հաճախ ենք գրապարտվում, որովհետեւ մեզ դեռ իներցիայով զոհ են համարում: Եվ սա կատարվում է, թող ներեն ինձ մեր հարգելի պատմաբանները, նաեւ նրանց մեղքով: Այսօր, ինչպես ասել է Դյումա-հայրը, պատմաբանը չի կարող միայն «անցած դարաշրջանի տիրակալը» լինել: Ես չեմ ասել, որ խառնակ ժամանակներում պատմաբանների բոլոր նպատակադրումները, որքան էլ պարադոքսալ է, պիտի ուղղված լինեն դեպի ապագան: Ասում են՝ ազատ ժողովուրդների պատմությունն է այն միակ առարկան, որ արժանի է պատմաբանների ուշադրությանը: Յամենայն դեպս, մեր համազգային բազմաչափական կենսագրության մեջ մեկ անգամ չէ, որ համոզվել ենք՝ ճիշտ են այն հետազոտողները, որոնք բռնակալների կողմից ճնշված ժողովուրդների պատմությունը համարում են ընդամենը անեկդոտների ժողովածու: Դրանում մենք համոզվում ենք՝ ծանոթանալով թուրք եւ թուրքամետ «պատմաբանների» եւ «պատմագիրների» գրվածքներին:

Դժվար է վիճարկել Անտոն Չեխովի նուրբ հեգնանքը, որը մի առիթով նկատել է, թե «բազմապատկման ազգային այցուսակ չի լինում»: Սակայն ինչ վերաբերում է պատմությանն ու պատմագրությանը, ապա այստեղ մենք անվիճելիորեն գործ ունենք միևնույն ուղղութունը՝ ազգային հասկացությունների հետ, գիտության ճիշտ այսպիսի ճյուղերի նման, ինչպիսիք են ռազմավարությունն ու մարտավարությունը: Եվ նա, ով առաջինն է ասել, թե պատերազմը չափազանց լուրջ ու ճակատագրական գործ է, որպեսզի այն լիովին վստահես գեներալներին, նա, իհարկե, ամենեւին էլ չի վիրավորել գիտնական-ստրատեգներին եւ դաշտային գորավարներին: Նույն խոսքը կարելի է հասցեագրել պատմությանն ու պատմագրությանը, որոնց ճակատագիրը չի կարելի ամբողջությամբ եւ առանց վերահսկողության վստահել նեղ մասնագետներին: Ճիշտ է, այս միտքն արդեն ինչել է Կրմեն Այվազյանի ատենախոսության տապալված պաշտպանության արձագանքներում: Բայց վստահ եմ, որ սա այն դեպքն է, երբ կրկնությունը չի կարելի ընկալել որպես գրական հանցագործություն: Ֆրանսիացի մեծ լուսավորիչ, իրավագետ ու փիլիսոփա Շառլ Լուի Մոնտեսֆիոն, վերլուծելով պետության տարրեր ձեւերը եւ ժողովուրդների մտայնությունները, զարմանալի բանաձեւի է հանգել. «Երջանիկ է այն ժողովուրդը, որի պատմությունը ձանձրալի է..»: Ասում են՝ մեկ օր անց կարդալով իր այս գրառումը՝ փիլիսոփան ավելացրել է. «Բայց դրա համար անհրաժեշտ է, որ չձանձրանան իրենք՝ պատմաբանները՝ գտնվելով միշտ առաջավոր դիրքերում՝ պարեկության մեջ»:

---

**AZG Daily #010, 01/24/2004**